**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**27.05.2026թ. կնքված N «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/30-1» գնման պայմանագրի**

ք. Երևան «29» հունիսի 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ԼՈՒՔ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրությունը, 27.05.2026թ. կնքված N «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/30-1» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, ինչպես նաև «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի թիվ 102 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքների կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 5304000 (հինգ միլիոն երեք հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

## 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԼՈՒՔ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Բաղրամյան 23, 26 բն. |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012002136 | Հ/Հ 1570070539350100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00921258 |
| Վ. Պապիկյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ. | Տ. Առաքելյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 1
27.05.2026թ. կնքված N «ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-26/30-1» գնման պայմանագրի
«29» հունիսի 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 71241200/550 | Երևան քաղաքի թիվ 102 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ: | - | - | - | - | - | 53040000 | 53040000 | 53040000 | 53040000 | 53040000 | 53040000 | 53040000 | 53040000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012002136
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԼՈՒՔ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 23, 26 բն.
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570070539350100
ՀՎՀՀ 00921258

Տ. Առաքելյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

Λ AMERIΛBΛNK

25.06.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.20376.26

*Բենեֆիցիար՝*
*Երևանի քաղաքապետարան*

**ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.20376.26**
**(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «Լուք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 27.05.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/30-1 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 539,000.00 (հինգ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 25 հունվարի 2027թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/30-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վճարային գործիքների և էքրոու գործառնությունների բաժնի ղեկավար՝**

**Գայանե Միրզոյան**

«AMERIABANK» CJSC CORPORATE AND INVESTMENT BANKING DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS

#bankaboutyou

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am